

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ-266-13.02.2018-ԱՍ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՈՒՄԻՑ ԱՌԱՋ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ

ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅ ՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
ՀՀ կառավարություն	«Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-266-13.02.2018-ԱՍ-011/0)	Բժշկական հաստատության դեղատունը չունի առանձին իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակ, այլ հանդիսանում է բժշկական հաստատության կառուցվածքային ստորաբաժանում և դեղատնային գործունեությունն իրականացնում է բժշկական հաստատության կարիքների համար: Մինչդեռ, նախագծով նախատեսված լրացմամբ առաջարկվում է առանց օրենքով նախատեսված մեծածախ իրացման լիցենզիայի առկայության, Հայաստանի Հանրապետության տարածք դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումք և հետազոտվող դեղագործական արտադրանք ներմուծելու իրավունք վերապահել նաև բժշկական օգնության և սպասարկման գործունեության լիցենզիա ունեցող անձին, ընդ որում առանց հստակեցնելու ներմուծման նպատակը (բժշկական հաստատության կարիքների համար կամ դեղերի մեծածախ կամ մանրածախ իրացման համար կամ այլ նպատակով), ինչն ընդունելի չէ:	Չի ընդունվել	Չի ընդունվել

<p>ՀՀ կառավարություն</p>	<p>«Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-266-13.02.2018-ԱՍ-011/0)</p>	<p>Առաջարկում ենք վերանայել նախագծի իմաստով ընտանիքի անդամների շրջանակը: Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով նախատեսված լրացման մեջ առաջարկում ենք՝</p> <p>1) «և» շաղկապներն փոխարինել «կամ» շաղկապներով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասով ամրագրված դրույթների պայմաններում նախագծով առաջարկվող կարգավորումը կիրառելի կլինի թվարկված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, ինչը, գտնում ենք, չի բխում նախագծի նպատակներից.</p> <p>2) «որդեգրող ծնող» և «որդեգրված երեխա» բառերը հանել, քանի որ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որդեգրումը դատական ակտ է, որով որդեգրվողը ձեռք է բերում կենսաբանական կապերին համարժեք ընտանեկան կապեր, որոնց շնորհիվ որդեգրողները և որդեգրվածները ձեռք են բերում ծնողների և զավակների համար օրենքով նախատեսված իրավունքներ և պարտականություններ: Հետևաբար, «ծնող» և «որդեգրող ծնող», ինչպես նաև «երեխա» և «որդեգրված երեխա» հասկացությունների տարանջատումը չի բխում օրենքի պահանջից.</p> <p>3) անդրադառնալ խորթ ծնողներին, քանի որ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 85-րդ հոդվածը սահմանում է խորթ հորը և խորթ մորը պահելու խորթ զավակների պարտականությունը, ըստ որի, օգնության կարիք ունեցող անաշխատունակ խորթ ծնողներն իրավունք ունեն դատական կարգով պահանջել դրա համար անհրաժեշտ բավարար</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Ընդունվել է: Լրամշակելու առաջարկով:</p>
------------------------------	---	--	--------------------	--

		<p>միջոցներ ունեցող չափահաս աշխատունակ խորթ զավակներից ապրուստի միջոց, եթե նրանք չեն կարող ապրուստի միջոց ստանալ իրենց չափահաս աշխատունակ զավակներից կամ ամուսիններից (նախկին ամուսիններից): Այլապես ստացվում է, որ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգիրքը, անգամ ցանկության բացակայության դեպքում, սահմանում է դատական միջամտությամբ խորթ ծնողներին պահելու խորթ երեխաների պարտականությունը, մինչդեռ նախագծային կարգավորումների պայմաններում խորթ երեխան ցանկության դեպքում անգամ չի կարողանա անհրաժեշտ դեղորայք ներմուծել խորթ ծնողի բուժման կուրսի կամ անձնական օգտագործման համար:</p>		
--	--	--	--	--